

Գիտության աղքատացումը վտանգ է հեռանկարին

Ճանաչական հայաստանի գիտությունը սևնասև չէր այն զարգացումներից, որոնք բնորոշ էին ԽՍՀՄ գիտական հասակարգին: Խորհրդային միության «կենդանության օրոք» գիտական, տեխնիկական և տեխնոլոգիական նորությունների կամ նոր արտադրանքի մշակումների առյուծի բաժինը իրականացնում էին ճյուղային գիտահետազոտական ինստիտուտները՝ միութենական ամենակարող կենտրոնի ֆինանսավորմամբ: Ընդհանուր առմամբ, հայաստանի գիտության ոլորտի 130-ից ավելի հետազոտական և նախագծային ինստիտուտներում գրադված էր ավելի քան 25 հազար գիտաշխատող:

1980-ական թվականների վերջի նկատմամբ գիտության ոլորտի աշխատողների թիվը կրճատվել է ավելի քան իննգ անգամ: Ընդ որում, տեղի է ունեցել ինչպես ամսօրյապես գիտական հետազոտողների թվի բազմակի կրճատում՝ ավելի քան 3 անգամ, այնպես էլ գիտական աշխատանք կատարող օժանդակ անձնակազմի շատ ավելի մեծ չափերով կրճատում, որոշ գնահատումներով՝ շուրջ 10 անգամ:

Անկախացման պայմաններում տնտեսության փլուզումը, ձեռնարկությունների կապերի խզումը, ուստի և նրանց գործունեության դադարեցումը, բնականաբար, զրոյականին մոտեցրին ճյուղային գիտահետազոտական կառույցներին տրվող պատվերները, ցամաքեցրին նրանց ֆինանսավորման աղբյուրները: Միեւնույն ժամանակ, այդ ինստիտուտներից շատերը կորցրեցին իրենց կադրային ներուժի զգալի մասը: Դրա հետ մեկտեղ, ներդրումների բացակայու-

թյան պատճառով, հնացել ու անընթացունակ են դարձել սարքավորումների զգալի մասը:

Խորագույն տնտեսական ճգնաժամի պայմաններում գիտության անկումը որոշակի առումով օրինաչափ պետք է համարել: Մյուս կողմից, տնտեսության ինչ-որ չափով աշխուժացումը հույս է տալիս, որ այդ ինստիտուտների մի մասի գործունեության համար կարող են նպաստավոր պայմաններ ստեղծվել: Սակայն վերակենդանացող ձեռնարկությունների զգալի մասը, որ կողմնորոշված են դեպի արտաքին շուկաներ, շատ դեպքերում շահագրգռված են նոր արտադրանքի լիցենզիաները ձեռք բերել արտասահմանից, քան թե դրանք պատվիրել տեղական ինստիտուտներին կամ ծավալել սեփական հետազոտությունները՝ երբեմն անորոշ ելքով:

Հարկավոր է ընդգծել մեկ համազամբ եւս. այսօր աշխարհում կտրուկ մեծանում են գիտության զարգաց-

ման համար կատարվող ծախսերը: Երկայուն գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների համար կատարված ընդհանուր ծախսերի գումարը Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության անդամ երկրներում անցնում է 550 մլրդ դոլարից, որը կազմում է համաշխարհային ՅՆԱ-ի 2,5 տոկոսը: Համեմատության համար նշենք, որ 37-ում 1995 թ. գիտությանը հատկացվել է երկրի ՅՆԱ-ի ընդամենը 0,04 տոկոսը, 1996 թ.՝ 0,07 տոկոսը, 1997 թ.՝ 0,13 տոկոսը, 1998 թ.՝ 0,15 տոկոսը, 1999 թ.՝ 0,15 տոկոսը, 2000 թ.՝ 0,18 տոկոսը, 2001 թ.՝ 0,12 տոկոսը:


Փաստենք, որ քաղաքական անկայիության տասներկուամյա ժամանակահատվածում գիտության եւ տեխնոլոգիաների ոլորտին արված բյուջետային հատկացումների շարժը մշտապես ետ է մնացել տնտեսական աճի տեմպերից: Հայաստանի Հանրապետության ներկա բյուջետային կացությունն այնպիսին է, որ պետության ծախսերի կառուցվածքում գիտական հետազոտությունների եւ տեխնոլոգիական մշակումների բնագավառներին հատկացումները չեն հասնում բյուջեի ծախսերի նույնիսկ 1 տոկոսին: Թեեւ, 1995 թվականից սկսած գիտության ոլորտին պետական հատկացումների որոշակի աճ է գրանցվել, սակայն դրանք միանգամայն անբավարար են գիտական ներուժի նորմալ վերարտադրության համար:

Մինչդեռ, դարձյալ միջազգային

փորձից, հայտնի է, որ գիտության ոլորտի տեւական բարձիթողի վիճակը կարող է հանգեցնել այն բանին, որ ժամանակի ընթացքում չափազանց դժվար կլինի վերականգնել կորցրած ներուժը, քանզի այդ բնագավառի զարգացումները ինտեգրիոն բնույթի են ու ծախսատար: Այդ փորձը աներկա

Փորձագիտական դիտարկումները ցույց են տալիս, որ տնտեսական անվտանգության սպառնալիքներ են ստեղծվում, եթե պետական բյուջեից գիտությանը հատկացվող միջոցների մասնաբաժինը ավելի նվազ է ընդհանուր պետական ծախսերի 1,5 տոկոսից: Եթե այս չափանիշով գնահատե-

Գիտության համար կատարված ծախսերի շարժը 1995-2001 թթ.(տոկոսներով)



վկայում է, որ գիտական ոլորտի բարձրակարգ հետազոտող մասնագետի պատրաստումը տեւում է 25-30 տարի, ընդ որում, գիտելիքների կուտակման գործընթացը շարունակվում է մարդու ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում:

Կարելի է վստահաբար պնդել, որ հայկական գիտության եւ տեխնոլոգիաների թերֆինանսավորումը ոչ միայն մարտահրավեր է այդ բնագավառների երկարարածանկետ զարգացմանը, այլև լուրջ սպառնալիք է երկրի տնտեսական, ինչու չէ՛ նաեւ քաղաքական անվտանգությանը:

լու լինենք, ապա 37-ում գիտության համար կատարված ծախսերի առումով տնտեսությունը վերջին տասնամյակում եղել է ու շարունակվում է լինել վտանգավոր գոտում:

Բնականաբար, 37-ում գիտության ոլորտի տեւական թերֆինանսավորումը անխուսափելիորեն հանգեցնելու է ոչ միայն տնտեսական անկման, այլև մրցունակության ետևան կորստի: Իսկ մրցունակության տեւական կորուստը, իր հերթին, նշանակում է երկրի տնտեսական անվտանգության հիմքերի ետևան թուլացում:

Շ. ՄԻՆԱՍՅԱՆ